


բու ընտանեկան գորով և ոչ ալ քու բա-
րեկամական զբոսանքներդ . նախանձոտ բըռ-
նաւորութի մը պիտի չըլլամ, այլ խոչնեմ և
գուարժ քոյր մը, որ պիտի գերեցկացնէ քու
կեանքդ առանց գայն սեղմելու, և բեզ պիտի
հայթայթէ, ախտաւն ո՛ր և է նեղուծման կեն-
դանի ու խաղաղ գոհունակութիւններ, որոնք
պիտի պատկուին մեծ ուրախութիւնով մը,
և այդ պիտի ըլլայ փոռապանծ յաղթանա-
կին ուրախութիւնը, որու յիշատակը քաղցր
պիտի ըլլայ քեզ մինչեւ ցետր ծերութիւն,
և քեզ ինձ համար ըսել պիտի տայ . — Իմ
գոյութեանս ամենամաքուր, ամենաառողջ,
ամենաբընդանի սէրը եղաւ այն . — Ու զորք,
այո՛ր, լաւ կը յիշէք թէ ուրիշներ, մտա և
հեռասօր անցեալի մը մէջ, նոյն լեզուն բա-
նեցօցին ձեզի, թէպէտ և կը ստիկն . Բայց
անսոցմէ և ոչ մին խօսեցաւ ձեզ երբեք
այնպիսի ախորժելի քաղցրութեամբ, այն-
պիսի պարկեշտ ու համազօլ լրջութեամբ,
որով աւ կը խօսի ձեզ . Աս չի կրնար ստել .
Չի ստեր . — Այո՛, սիրելի բարեկամուհի,
կը հաւատամ քեզի, այո՛, եկուր չընտղ տի-
րուհի, ես կը ծոծեմ ճակատս քու ծոցիդ
մէջ և քեզի կը յանձնեմ հոգիս . Հապա
ղեպ ի աշխատանք :

Շարայարելի



ՏԱՆԴԻ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԺԱ ԵՐԳ

ՎԵՅԵՐՈՐԳ ՊԱՐՈՒՆԱԿ ԼԻՐԵՏԻՈՍՔ

ԳԵՐԵՋԻԱՆ ԱՆԱՍՏԱՍ ՊԱՊՅՆ

ԲԱԺԱՆՈՒԻՆ ԴԺՈՒԱԵՆԻ ՔԱՂԱՔԻՆ

ՀԱՍՏԻՔ խոշոր ու լուսնախոնավ ժայռերէ
կազմուած կ'որ ամի մը ծայրն՝ որ նայեր
Գեռ աւելի անգութ կոչուի՝ մը վրայ .
Եւ հոն՝ սաստիկ զագիւր հոտին պատճառաւ
Զոր խորափոխ անդունդը վեր կը բուրէ,
Ամրացանք մեծ մի տապանի կափարջն՝

Կտել, ուր ես տեսայ զըրուած մ՛ որ կ'ըսէր .
Անաստա պապը կը պահեմ, զոր քաղիդ
Ճանապարհէն մոտրեցոց փոտիկնս :
« Պէտք է որ մենք դանդաղորէն իջնենք վար,
Որպէս զի նախ ըզգայարանքը վարժի
Ժահաւհոտին, ու ետէն ալ չենք զգուշանար » :
Այսպէս վարպետն : Իշե ես . « Հընարք մը գը-
հիւնտը, որ գոր շանցնի ժամանակն » : (սիր,
Իւ նա . « Ի՞նչ ալ ստոր վրայ կը մտածեմ .
Որքեակ իմ, կան այս փայտերուն բտորեւ,
Սկըսաւ ըսել, երեք փոքրիկ պարունակք՝,
Որ երթալով կ'ենդնան . նըման միւսներուն » :
Աժէնքն ալ լի են անիծեալ ստուերներով :
Բայց զի միայն տեսնելով զո՛ւ ըլլաւ ետքն,
Ու զի թէ թ'նչպէս և ինչու խըռնուած են :
Աժէն շարունակ են երկից
Զըրուհարանքն է նըպատակ, որ այլոց
Կամ բըռնութեամբ, կամ նենգութեամբ
Եւ զի յատուկ շարն է մարդուն՝ նենգութիւնն,
Աւելի եւս է անհաւոյ Աստուծոյ .
Ուստի նենգոցք վարն են՝ սաստիկ զաւոցմէջ :
Բայց բըռնութիւնն երեք՝ անձանց ըլլաւելուն՝
Երեք զատ զատ պարունակայ կը բաժնուի :

1. Աւելի անգութ կերպով սանջուող հօգե-
ներու խառն ամբոխի մը վրայ :
2. Վեր վերջուած էին կափարձիք . հմմտ .
Դժ . Թ 121 . Ժ 8 :
3. Փոտիկնս մոլորացուցած Անաստաք՝ պա-
պը չէ, այլ համանուն Յունաց կայսրը : Տան լէ
այս ծանր սխալանայ մէջ ինչպէս է՝ Պաշտօնայի
Եղբայր Գործարհի ժամանակագրութիւնն : —
Փոտիկնս հերետիկոսութիւնը յայտ կը կա-
յանար կը համարէր թէ Քրիստոս նախ սակ
մարդ եղած ըլլայ, և ապա իւր վարուց սրբու-
թեամբը արժանացած Աստուծոյ որդի ըլլալու :
4. Փոքրիկ՝ բողոքատմաբ վերին դժուոց պա-
րունակներուն . վասն զի, ինչպէս բուսեցաւ,
երթալով կը նեղանն, և որափ նեղանն, այն-
քան պատիժները կը ծանրանն :
5. Զորս անցար :
6. Այսինքն նորէն հարցնես թէ քն մար-
դիկ են, պատիժին ինչ է, ևն ինչպէս ըրեր
էր . Դժ . Գ . 33, 75 . Գ 74 . Կ 30, 31 Է . 37,
38 . Թ . 124 :
7. Վայնեանը նպատակը ամէն շարութեան՝
որ երկնից ստեղծութիւնը էր վրայ կը հրաւիրէ՝
(կը ստանայ) է անիրաւոտրիւն . և ամէն այդ-
պիսի նպատակ՝ կը թշուառացընէ զուրիշները .
բանութեամբ կամ նենգութեամբ : Այս է բառ առ
բառ թարգմանութիւնը այդ տան . որուն մէջ
կարելի չըզու անիրաւոտրիւն բողոք գործածել :

Աստուծոյ, իր անձին և իւր ընկերոջ
 կ'ըլլուի այն, յանձինն անոնց ուրիշերուն,
 ինչպէս լընես պիտի յայտնի խօսքերով:
 Բընդի մահեր, և ցաւազին խոցուածներ
 կ'ըրնան արբաւի յանձն ընկերին, և ընչից՝
 Աւերածներ, Հըրդէհք և վաշխք փնասարեք:
 Աստի սպանողք և ննկութեամբ խոցողներն,
 Աւարտուի և աւագակք ամէնքն ալ
 խուժի խուժի ասղի պտրունակին մէջ տան:

(Զուին:

Կրնայ ընել մարդ բռնութիւն իր անձին⁹
 կամ իւր ընչից¹⁰, ըստի հարկ է որ երկրորդ
 Պարունակին մէջ անպըտուող զըլլայ լայ
 Ով որ ինքզինքը ձեր երկրէն կը զըրկէ¹¹
 Ժառանգութիւնը խաղաղով կը վատնէ:
 Եւ կու լայ հոն¹² ուր զըւարթ պէտքեր ըլլալ:

Աստուծոյ զէմ ալ բընտութիւն կ'ըլլուի,
 Ուրանալով, Հայհոյելով զայն սրբառով¹³,
 Անարգելով բնութիւնն և իւր քարուկներն:

Ահա ասոր Համար նեղկեկ¹⁴ պարունակն՝
 Կը կընէ իւր կընքով Սոյամն¹⁵ ու Փահար,
 Եւ որք զԱստուած սըբառով, խօսքով կ'անար
 Կենցը՝ որմէ կը խայթուի ամէն խիղճ՝ (զենն):
 Կըրնայ մարդ գործ զընել անոնց զէմ՝ որոնք
 Կը վըստահին իրեն կամ շեն վըստահիր:
 Կենդութեան այս կերպը¹⁶ թուի թէ խըզէ
 Բընութենէն ստեղծուած սիրոյ կապը լով,
 Որով երկրորդ խառնելն մէջ կ'որջանան

Կեղծաւորներ, շողքորթիներ, կախարդներ,
 Խարախաղներ, սիմոնիականք և զողեր,
 Բողբարածներ, խարոք և այլ գարսութիւնք:

8. Երեք տեսակ Աստուած, իր անձը և ընկերքը:
 9. Ինքզինքն սպանելովով:
 10. Վասնելով:
 11. Կը սպաննէ ինքզինքը. ձեր երկրէն կ'ը-
 ակ Կ'երգրիտու վասն զի Տանգէ սղ է:
 12. Այխարհի մէջ. փոխանակ իրենց Հարըս-
 տութիւնները սարախ զուարթ վայելուս: ան-
 միտ շտայլութեամբ վատնելով, կամ անձնաս-
 պան եղան և կամ ապրեցան կեանք մը՝ որ
 մահուան նման էր:
 13. « Ասաց անզգամն ի սրտի իւրում թէ
 ոչ զոյ Աստուած » Սղմ. ժԳ. 1:
 14. Երրորդը՝ որով և միաներէն աւելի նեց:
 15. Ստղմացիք, սոցոմականք: — Փահար՝
 մայրաքաղաք Կենտի՝ Կելէնի նահանգին մէջ,
 սըբ Տանգէի օրով կը վիտայտն վաշխասուք:
 և Փահարացի ըսելով. վաշխասու կ'իմանային:

Իսկ միւս կերպով¹⁷ կը մոռցուի բնական սէրն,
 Եւ նաեւ այն՝ որն որ վերջէն կ'ուերնայ,
 Որմէ կը ծնի վըստահութիւն մ' առանձին:
 Ուստի վերջին պարունակին մէջ՝ ուր է
 Երկրիս կեդրոնն ուր կը նըստի Պըղըտոսն՝
 Որ և իցէ մատնիչ ի սպաս կը տանջուի »:
 Եւ ես. « Վարպետ, բացատրութիւնդ շատ

(ըստակ

Յաւալ կ'երթայ, և խիտ աղէկ կը բաժնէ
 Այս խորանգուճը վերապն ու իր բնակիչներն:
 Բայց ըսէ ինձ, ինչու տըղմուս ճահէններն¹⁸,
 Հովէն քըլուողք¹⁹ և անձրեւն չհարուա-
 (ձուողք²⁰,
 Եւ այնպէս խիտ լեղուով միմեանց հան-

(չիպողք²¹

Ձեն Հրաբորքք քաղաքին մէջ պատմելի
 Եթէ զըբգած են Աստուծոյ բարկութիւնն:
 Կամ եթէ ոչ, այդքան ինչու կը տանջուին:
 Եւ նա ինձի. « Այդչափ ինչու կը շեղի
 Հանձնարք, ըսաւ, սովորական ընթացքէն:
 Կամ միտքդ արդեօք ուրիշ ո՞ր տեղ կը նայի:
 Ձեն յիշեր այն խօսքերը զոն՝ որոնցմով
 Բարդականըք²² կը ճառէ ճոխաբար
 Այն վիճակաց վրայ զոր երկիւնքն անարգէ,
 Անժուժութիւն, շարութիւն, խօլ գրաստու-

(թիւն:

Եւ թէ ինչպէս անժուժութիւնը զԱստուած
 Կուտը կ'անարգէ, ու նուազ պարսաւ կ'ըն-

(չունի:

Այս ասածին եթէ դուն լաւ ուչ զընես
 Եւ եթէ դու միտքդ բերես՝ թէ ո՞վ են
 Անոնք որ վերը քաղքէս գուրս²³ կը տանջուին,

16. Վերջինը, այսինքն՝ վստահողներուն զէմ:
 17. Միւս կերպով այսինքն նենգութիւն
 ընելով վստահողներուն զէմ, ոչ միայն կ'ա-
 նարգուի ախեղբրական սէրը՝ զոր բնութիւնը
 կ'ուզէ որ ըլլայ ամէն մարդոց միջեւ այլ և
 այն որ վերջին կ'անելուայ, այսինքն է աղքա-
 կանութեան և բարեկամութեան կապը, որմէ
 յառաջ կու գայ մարդոց մէջ մասնակի ընտա-
 նութիւն մը, վստահութիւն մը:
 18. Բարկացածները:
 19. Մարմնասէրք:
 20. Որկամուրք:
 21. Շտայլներն ու ազահները:
 22. Արիստոսելներն, զոր քուկը ըրիւր ուսում
 նասիրելով:
 23. Պըղտոսնի քաղքէն գուրս վերի պա-
 րունակներուն մէջ:

Պիտի տեսնես լաւ թէ ինչո՞ւ գատուած են Այս չարքերն, և թէ ինչո՞ւ նուազ ցափոտ Պատժէ զիրենք արգարութիւնն Աստուծոյ : « Արփիդ ²⁴, որ բիժն ամէն աչքէ կը պարզես, Այնպէս զիս գոհ կ'ընես երբ ինչ կը լուծես, Որ գիտնալու չափ կ'ախորժիմ երկբայիլ : Գըշիկ մը դեռ ետեւ դարձիր, ըսի ես, Հոն ուր ըսիր ²⁵ թէ կ'անարգէ զարութիւնն Աստուծոյ՝ վաշխը, և հանգոյցը քակէ » : « Իմաստից սէրն ²⁶, ըսաւ, յայտնի կը ցուցնէ Հասկըցողին զայն, ոչ լոկ մէկ մասին մէջ, Թէ բնութիւնն ինչպէս իր ընթացքը կ'առնէ Աստուածային մըտքէն և իր արուեստէն : Եւ եթէ լաւ Ինարանութեանը ²⁷ նայիս, Պիտի զըսնես, առանց շատ թուղթ դարձնելու »

24. Ով արեւակ, լոյս իմաստութեան, որ աւմէն միտքները մտքերը կը լուսաւորես, այնպէս կը զոհացընես զիս՝ երբ իմ տարակուսները կը լուծես : որ գիտնալու չափ կը սիրեմ տարակուսել, որպէս զի լսեմ քու իմաստուն պատահաններդ :

25. Հմտ. տ. 50 :

26. Իմաստասիրութիւնը՝ շատ աեղիբ կը սորվցընէ թէ ինչպէս բնութիւնը յառաջ կուգայ աստուածային մտքէն և իւր արուեստէն : Ըստ Պառտնականցի, արուեստը նախ Աստուծոյ մտաց մէջ է, յետոյ բնութեան. և ապա մարդուս մտաց մէջ :

27. Արիտաստելիս :

28. Արուեստը զուտոր է բնութեան, բնութիւնը զուտոր է Աստուծոյ. ապա ուրեմն իմանութեանը արուեստը թոռն կրնայ ըսուիլ Աստուծոյ :

29. Բնութեանն և արուեստն. Իրենցոց զբեխտեցընն ասոնք են. « Եւ սոս տէր Աստուած զմարդն զոր արար, և եզ զնա ի դրախտին փափկութեան գործել զնա և պահել... » քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո » :

30. Վաշխառուն Աստուծոյ գծածէն տարբեր ճամբար էլ բռնէ : Չընչուեիր իր ուտելիքը և չի բազմացընիր իր հարստութիւնը՝ երկրագործութեամբ հարստութեամբ և կամ վաճառականութեամբ, այլ քրտամով և ուրիշներու զբոսինքով :

31. Կեցած էին Անաստաս պապին դամբաւնին քով. տես տ. 6 :

32. Չկանց համատեղութիւնը. — Սայրբ. մեծ Արլը. — Արգանտես, հով հիւսիսային արեւմտեան և նաեւ այն կողմը՝ ուրիշէ կը փչէ : — Այս խոսքը գրով ըսել կ'ուզէ որ արշաւոյսը կը սկսի : Տանդէ տաք ժամ անտառին մէջ անցուց. միջնադին դժուրք մտաւ. կէս զիշերուն՝ աղաներուն պարունակը : Պղտուսներ քաղաքը կը մանէ՝ արեւազալինն : Եւ ահա առաջին օրը լմնցած է :

Որ բընութեան կը հետեւի ձեր արուեստն Որչափ կըրնայ, աչկերան ինչպէս վարպետին. Որով գո՞գ թոռն ²⁸ է Աստուծոյ ձեր արուեստն Այս երկուքն ²⁹, եթէ դուն լաւ կը յիշես Ծնընդոց զբրբին առջի զուխներն, հարկ է որ Մարդիկ իրենց կեանքն առնելով զարգանան Եւ զի ուրիշ ճամբայ կ'բռնէ վաշխառուն ³⁰, կ'արձամարձէ բնութիւնն յինքեան և յաստուծուն »

Իր յոյսն ուրիշ բանի վըրայ զընելով : Այլ ³¹ հետեւէ ինծի, քալել կ'ախորժիմ, Չի կը կայտուն հորիզոնին վրայ Չբռնուք ³², Եւ Սայրբ մօտ Արգետեսի կը զբռուի : Եւ սակից շատ հեռուն ժայռէն պիտ' իջնենք :

Շարայարեղի



Փ Ի Տ Ա Ի Թ Ի Խ Ե Ե Ի Փ Ի Ի Տ

Քաղաքակրթութիւն և գիտութիւն եթէ իրարու հետ զոյգ ընթանան, այն ատեն մարդկային նիթական կեանքն կը վայլէ բարութիւն և երջանիւթիւն : Եւ դարուս յառաջադիմական պատմութեան վրայ հայեացք մը կը բաւէ, տեսնելու համար՝ թէ մարդուս կեանքն որչափ օրբօրուով հանգստութեան սահմանին մէջ մտեր է : Եւ յիրուսի, այժմ գիտութիւնը ամէն բանի մէջ կը մտնէ, ամէն տեղ ինքզինքը կը ցուցնէ : Միթէ՛ գիտութեանց և գիւտերու արգիւնք չէ՞ն շուրջիկաւ ցամաքներու վրայ սուրալը, հեռախօսով մեր խօսքերը քաղքէ քաղք լսելի ընելը : Ելելարականութեան արգիւնք՝ հեռագրով է որ աշխարհէ աշխարհ վայրկեանի մը մէջ հաղորդակցութեան կը մտնենք : Եւ զենանով՝ բանի մը օրուսն միջոցին մէջ ողկիւնստեսն կը կտրենք, երկրագունդիտ շրջանը կ'ընենք : Մեր պապերը երջանիկ կը ճամարէին զիրենք, եթէ գիշերները կարենային առատ ձէթ ունենալ կամ ճարպամտով լուսաւորել ընտանեկան յարկը. մինչդեռ հիմակ, տեսակ տեսակ փառասօր լոյ-